2026-2027 ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ
CONCOURS D'ENTREE 2026-2027

Հասարակագիտություն / Sciences sociales

(Իրավագիտության ֆակուլտետ / Faculté de Droit)

22.06.2026

Temps imparti / Ժամանակը: 2.5 heures / 2.5 ժամ

Առաջադրանքի կառուցվածքն ու սկզբունքները

Քննական հարցաթերթը բաղկացած է երեք հատվածներից:

1-ին հատվածում (1-60-րդ հարցեր) պատասխանի տարբերակներով հարցեր են: Պահանջվում է առաջարկված տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է **մեկ միավոր**:

2-րդ հատվածում (61-70-րդ հարցեր) պատասխանի տարբերակներով հարցեր են: Պահանջվում է առաջարկված տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է **երկու միավոր**:

3-րդ հատվածում (71-75-րդ հարցեր) բաղադրյալ հարցեր են՝ բաղկացած չորս ենթահարցերից: Պահանջվում է աղյուսակի աջ և ձախ սյունակներում տրված հասկացությունների, երևույթների միջև նշել ճիշտ կապերն ու համապատասխանությունները: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է մեկ միավոր, առաջադրանքի ամբողջական ճիշտ պատասանը՝ **չորս միավոր**:

Հարցերի ճիշտ պատասխաններն ընտրելուց հետո անհրաժեշտ է դրանք հստակ և խնամքով անցկացնել պատասխանների համար նախատեսած ձևաթղթի վրա: Ստուգվում և գնահատվում է միայն պատասխանների ձևաթուղթը:

Քննության ողջ ընթացքում կարգապա՛հ եղեք, մի՛ խոսեք և մի՛ խանգարեք ուրիշներին: Հակառակ դեպքում կարող եք զրկվել քննությանը մասնակցելու իրավունքից:

Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը: *Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է 1 միավոր:* *Միայն պատասխանի, պատասխանի բացակայության, ինչպես նաև մեկից ավելի պատասխաններ նշելու դեպքում՝ 0 միավոր:*		
1.	Պետական գրանցման ենթակա են.	ա) կենցաղային գործարքները բ) շուկայական գործարքները գ) անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքները դ) ոչ գույքային իրավունքից բխող գործարքները
2.	Դատավորներն ենթարկվում են.	ա/ ազգային ժողովին բ/ կառավարությանը գ/ գլխավոր դատավորին դ/ օրենքին
3.	Գործարքի հիմքը.	ա/ կամքն է բ/ պարտադրանքն է գ/ հարկադրանքն է դ/ պահանջն է
4.	Իրավունքի համակարգին բնորոշ է.	ա/ միասնականությունը բ/ համաձայնեցվածությունը գ/ ինքնավստահությունը դ/ ճիշտ են ա և բ պատասխանները
5.	Նորմատիվ իրավական ակտերը կազմում են.	գ/ միասնական հավասարաչափ համակարգ բ/ միասնական ստորակարգված համակարգ ա/ միասնական կենտրոնացված համակարգ դ/ միասնական քարացած համակարգ
6.	Իրավունքի ամենահին ձևը.	ա/ դրական իրավունքն է բ/ սովորութային իրավունքն է գ/ օբյեկտիվ իրավունքն է դ/ պետական իրավունքն է
7.	Նախավճարի մասին համաձայնությունը կնքվում է.	ա/ գրավոր և բանավոր բ/ գրավոր գ/ բանավոր դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
8.	Միջանկյալ դատական ակտը կարող է բողոքարկվել այն ստանալու պահից.	ա/ տասն օրյա ժամկետում բ/ տասնհինգ օրյա ժամկետում գ/ քսան օրյա ժամկետում դ/ մեկ ամսյա ժամկետում

9.	Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագիրը ընդունվել է.	ա/ 1950 թվականին բ/ 1959 թվականին գ/ 1996 թվականին դ/ 1987 թվականին
10.	Մարդու իրավունքների եվրոպական դատարանն առաջին հերթին լուծում է.	ա/ դիմումների ընդունման հարցը բ/ նիստերի անցկացման հարցը գ/ դատավորների հարցը դ/ պաշտոնական ձևաթղթի հարց
11.	Ո՞վ է առաջին անգամ ձևակերպել պետական իշխանությունը օրենսդիր, գործադիր և դատական թևերի միջև բաշխելու սկզբունքը:	ա/ Կ.Մարքսը բ/ Ժ.Մոնտեսքյոն գ/ Ֆ.Ռատցելը դ/ Կ. Հարտլանդը
12.	Հայաստանում բոլշևիկները իշխանության եկան.	ա/ 1918թ. բ/ 1919թ. գ/ 1920թ. դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
13.	Ե՞րբ է Եվրոպայի խորհուրդն ընդդունել «Մահապատժի վերացման մասին»փաստաթուղթը:	ա/ 1963թ. բ/ 1973թ. գ/ 1983թ. դ/ 1993թ.
14.	Հայաստանի անկախության մասին հռչակագիրն ընդունվել է.	ա/ 1991թվականի օգոստոսի 23-ին բ/ 1990թվականի օգոստոսի 23-ին գ/ 1995թվականի օգոստոսի 23-ին դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
15.	Ե՞րբ սկսվել առաջին աշխարհամարտը.	ա/ 1914թ. բ/ 1918թ. գ/ 1939թ. դ/ 1945թ
16.	Հայաստանում նորմատիվ ակտերի պետական գրանցումը իրականացնում է.	ա/ ՀՀ պաշտպանության նախարարությունը բ/ ՀՀ արդարադատության նախարարությունը գ/ ՀՀ Ազգային ժողովը դ/ Նոտարիատը
17.	Ազգայնամոլություն կամ.	ա/ շովինիզմ բ/ կոնսերվատիզմ գ/ մարքսիզմ դ/ նացիոնալիզմ

18.	Աշխարհիկացում կամ.	ա/ ֆրակցիա բ/ սեկուլյարիզացիա գ/ ռեստիտուցիա դ/ սպեկուլյացիա
19.	Ո՞ր մարմինն է կատարում ամուսնության գրանցումը ՀՀ–ում.	ա/ նոտարիատը բ/ դատարանը գ/ քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմինը. դ/ իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմինը.
20.	Ո՞րը օրենսդրական գործընթացի փուլ չէ.	ա/ օրենսդրական նախաձեռնության փուլ բ/ օրինագծի քննարկման և ընդունման փուլ գ/ ընդունված օրենքի մեկնաբանման փուլ դ/ ընդունված օրենքի ՀՀ նախագահի կողմից ստորագրման և հրապարակման փուլ
21.	Ու՞մ են պատկանում հետևյալ խոսքերը մարդու ազատության վերաբերյալ. «Մարդու ազատությունը ծնվում է միայն այն ժամանակ, երբ մարդն ունակ է դառնում հաղթահարելու իր բնական, կենդանական գոյությունը և ինքն իր համար ձևավորելու նոր անձ»:	ա/ Ի. Կանտ բ/ Գ. Հեգել գ/ Շ. Մոնտեսքիո դ/ Թ. Ջեֆերսոն
22.	Դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները ապահովում են դատավորների՝	ա/ անձեռնմխելիությունը բ/ անկողմնակալությունը գ/ անկախությունը դ/ ճիշտ են բ և գ պատասխանները
23.	Փաստաբանական պալատը՝	ա/ անկախ կազմակերպություն է բ/ ինքնակառավարվող կազմակերպություն է գ/ ստորադասության մեթոդով կառուցված կազմակերպություն է դ/ ճիշտ են ա և բ պատասխանները
24.	Անձին, ով կասկածվում է հանցանք կատարելու մեջ, մեղադրանք առաջադրելու իրավունք ունի՝	ա/ դատավորը բ/ դատախազը գ/ քննիչը դ/ հետաքննիչը
25.	Ո՞ր սկզբունքի համաձայն է ամբաստանյալի մեղավորության ապացուցման պարտականությունը դրված մեղադրող կողմի վրա.	ա/ մեղավորության կանխավարկածի համաձայն բ/ արդարացիության կանխավարկածի համաձայն գ/ անմեղության կանխավարկածի համաձայն դ/ իրավականության կանխավարկածի համաձայն

26.	Ինչպիսի՞ հայց կարող է հարուցել դատախազությունը.	ա/ պետական շահերի պաշտպանության բ/ քաղաքացիական շահերի պաշտպանության գ/ դատավարության մասնակիցների շահերի պաշտպանության դ/ ճիշտ են ա և բ պատասխանները
27.	Ոստիկանությունը անձի իրավունքները սահմանափակում է՝	ա/ օրինական հիմքերով բ/ կամայական հիմքերով գ/ չունի այդպիսի իրավասություն դ/ ճիշտ են ա և բ պատասխանները
28.	Նշվածներից ո՞րը գրավոր գործարքի ձև չէ.	ա/ հասարակ գրավոր գործարք բ/ պետական գրանցման ենթակա գործարք գ/ նոտարի կողմից վավերացրած գործարք դ/ փոխանակման գործարք
29.	Իրավական կարգավորման ո՞ր ձևն է առկա օրինակում. Պետական մարմինները գրանցում են անշարժ գույքի նկատմամբ մարդկանց սեփականության իրավունքը/տալիս են սեփականության իրավունքի վկայական։	ա/ իրավաստեղծ բ/ իրավակիրառ գ/ իրավապահպան դ/ իրավապաշտպան
30.	Պետական հարկադրանքն ունի.	ա/ կամայական բնույթ բ/ հայեցողական բնույթ գ/ իրավական, որոշակի բնույթ դ/ համընդհանուր բնույթ
31.	Ըստ անհատների ակտիվության աստիճանի՝ քաղաքական գիտակցության և վարքագծի տեսակ է.	ա/ սոցիալապես ակտիվ քաղաքական գիտակցությունը և վարքագիծը բ/ հարմարվողական քաղաքական գիտակցությունը և վարքագիծը գ/ օտարված քաղաքական գիտակցությունը և վարքագիծը դ/ բոլոր պատասխանները ճիշտ են
32.	Ո՞րը միապետության տեսակ չէ.	ա/ դուալիստական բ/ դասային ներկայացուցչական գ/ խորհրդարանական դ/ արիստոկրատական

33.	Վերաքննիչ բողոքը կարող է բերվել՝	ա/ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտի դեմ բ/ դատավորի կողմից հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտած ակտերի դեմ գ/ միջանկյալ դատական ակտերի դեմ (բացառիկ դեպքերում) դ/ ճիշտ են բոլոր պատասխանները
34.	Հետևյալ դատողություններից ո՞րն է սխալ:	ա/ փաստաբանն իրականացնում է իրավական խորհրդատվություն բ/ փաստաբանը կազմում է իրավական փաստաթղթեր գ/ փաստաբանն իրականացնում է ներկայացուցչություն դատարանում դ/ փաստաբանը չի մասնակցում նախաքննությանը
35.	Ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել.	ա/ վերաքննության կարգով՝ վերաքննիչ դատարաններում բ/ վճռաբեկության կարգով՝ վճռաբեկ դատարաններում գ/ սահմանադրական դատարանում դ/ արտակարգ դատարանում
36.	Խորհրդարանի պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի հարցով Սահմանադրական դատարան կարող է դիմել	ա/ պատգամավորության թեկնածուները բ/ ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ երրորդը գ/ գլխավոր դատախազը դ/ դատարանները
37.	Ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերով ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում.	ա/ 15-օրյա ժամկետում բ/ հրապարակման պահից գ/ հրապարակման պահից մեկ ամիս հետո դ/ մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը
38.	Պայմանագիրը, որով քաղաքացին պարտավորվել է չզբաղվել ձեռնարկատիրությամբ, իրավաբանորեն.	ա/ վավեր է բ/ անվավեր է գ/ առոչինչ է դ/ ճիշտ պատասխանը բացակայում է

39.	Ինչո՞վ էր պայմանավորում Ի. Կանտը խաղաղության դարաշրջանի հաստատումը	ա/ կառավարման հանրապետական ձևի տարածումով բ/ կառավարման խորհրդարանական ձևի տարածումով գ/ կառավարման միապետական ձևի տարածումով դ/ կառավարման ժողովրդավարական ձևի տարածումով
40.	Ու՞մ է պատկանում այն միտքը, որ պետությունները պետք է ընդունեն «անխախտելի միջազգային սկզբունքներ», որոնք կերաշխավորեն ռազմական հոսպիտալների և բուժանձնակազմի իրավական պաշտպանությունը.	ա/ Ժան Ժակ Ռուսո բ/ Անրի Դյունան գ/ Կարլ ֆոն Կլաուզևից դ/ Թոմաս Հոբսը
41.	ԼՂՀ-ում ե՞րբ է ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և պետական անկախություն հռչակելու հարցով անցկացվել հանրաքվե.	ա/ 1991 թ. սեպտեմբերի 21 բ/ 1991 թ. դեկտեմբերի 10 գ/ 1988 թ. փետրվարի 20 դ/ 1989 թ. դեկտեմբերի 1
42.	Տուգանքը /իրավախախտման համար/	ա/ ֆիզիկական պատասխանատվության անբարենպաստ հետևանք է բ/ կազմակերպական պատասխանատվության անբարենպաստ հետևանք է գ/ հոգեբանական պատասխանտվության անբարենպաստ հետևանք է դ/ գույքային պատասխանատվության անբարենպաստ հետևանք է
43.	Աշխատանքից ազատումը	ա/ անձնական (ֆիզիկական) պատասխանատվության անբարենպաստ հետևանք է բ/ քաղաքական պատասխանտվության անբարենպաստ հետևանք է գ/ գույքային պատասխանատվության անբարենպաստ հետևանք է դ/ կազմակերպական պատասխանտվության անբարենպաստ հետևանք է
44.	Ազատազրկումը /իրավախախտման համար/.	ա/ կազմակերպական պատասխանտվության անբարենպաստ հետևանք է բ/ քաղաքական պատասխանատվության անբարենպաստ հետևանք է գ/ անձնական (ֆիզիկական) պատասխանատվության անբարենպաստ հետևանք է դ/ գույքային պատասխանատվության անբարենպաստ հետևանք է

45.	Միջին ծանրության վնաս պատճառելու համար պատասխանատվության տարիքը սկսվում է.	ա/ 14 տարեկանից բ/ 16 տարեկանից գ/ 18 տարեկանից դ/ 20 տարեկանից
46.	Սահմանադրությունը որպես հիմնական օրենք ունի.	ա/ զրկող և պատժող բնույթ բ/ վերականգնող և հատուցող բնույթ գ/ հիմնադիր և հիմնարար բնույթ դ/ կանխող և դաստիարակող բնույթ
47.	Անձի կողմից հանրորեն վտանգավոր արարքի նախատեսումը և կատարումը.	ա/ դիտավորություն է բ/ անզգուշություն է գ/ ինքնավստահություն է դ/ անտարբերություն է
48.	Վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն.	ա/ գործին մասնակցող անձինք բ/ դատախազը՝ օրենքով նախատեսված դեպքերում գ/ գործի քննությանը չմասնակցած այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործը ըստ էության լուծող ակտ դ/ ճիշտ են բոլոր պատասխանները
49.	Մեղադրանք ներկայացնելու գործառույթ իրականացնող չէ.	ա/ տուժողը բ/ փորձագետը գ/ դատարանը դ/ ճիշտ են բ և գ պատասխանները
50.	Կտակը	ա/ գույքի տնօրինման վերաբերյալ երկու անձանց կամքի արտահայտություն է բ/ գույքի տնօրինման վերաբերյալ՝ իրավաբանական անձ հանդիսացող ձեռնարկության կամքի արտահայտությունն է գ/ մեկ գործունակ անձի՝ իրեն պատկանող գույքի տնօրինման վերաբերյալ կամքի արտահայտություն է դ/ ներկայացուցիչի միջոցով կատարվող գործարքի տեսակ է
51.	Փակ կտակը կազմում է	ա/ նոտարիատը բ/ վկան գ/ կտակարարը դ/ վերը նշվածներից ոչ մեկը
52.	Աշխատավարձի չափի նվազեցման մասին, գործատուն աշխատողին տեղյակ պետք է պահի.	ա/ ոչ ուշ, քան երկու շաբաթ առաջ բ/ ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ գ/ ոչ ուշ, քան երկու ամիս առաջ դ/ ճիշտ պատասխանը բացակայում է

53.	Ո՞ր փաստաթղթի համաձայն՝ քրեական հանցագործություն կատարած յուրաքանչյուր ոք ունի իրավունք հարցաքննելու իր դեմ ցուցմունքներ տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները հարցաքննության ենթարկվեն.	ա/ «Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը բ/ «Խոշտանքումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» եվրոպական կոնվենցիայի համաձայն գ/ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագրի համաձայն դ/ «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային» կոնվենցիայի համաձայն
54.	Որդեգրում կարող են իրականացնել.	ա/ միայն երեխայի արյունակից ազգականները բ/ միայն երեխայի հետ արյունակցական առնչություն չունեցող անձիք գ/ միայն կողմնակի անձիք դ/ երեխայի արյունակցական հարազատները, ինչպես նաև կողմնակի անձիք
55.	Ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից, եթե.	ա/ հարգելի պատճառով երեխային չեն կարող վերցնել ծննդատնից բ/ մեկ տարի անընդմեջ բացակայում են երկրից գ/ տառապում են քրոնիկ թմրամոլությամբ դ/ տառապում են քրոնիկ հիվանդությամբ
56.	Մարդու առաջին սերնդի իրավունքներն են.	ա/ հասարակական, տնտեսական և մշակույթայինը բ/ քաղաքացիականը և քաղաքականը գ/ համերաշխությանը դ/ճիշտ պատասխանը բացակայում է
57.	Հայոց պետականությունների պատմության մեջ, ե՞րբ է ընդունվել առաջին սահմանադրությունը:	ա/ 1265թ. բ/ 1184 թ. գ/ 1995 թ. դ/ 1922 թ.
58.	ՀՀ–ում արտաքին քաղաքականության կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը իրականացնում է.	ա/ Ազգային ժողովը բ/ ՀՀ նախագահը գ/ Կառավարությունը դ/ Արտաքին գործերի նախարարությունը

59.	Ինչպե՞ս է կոչվում ՀՀ նախագահի ընդունած ենթաօրենսդրական ակտը։	ա/ հրահանգ բ/ հրամանագիր գ/ որոշում դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
60.	Բացառիկ՝ հանրային գերակա շահի վերաբերյալ որոշում կայացնում է.	ա/ վարչապետը բ/ կառավարությունը գ/ Սահմանադրական դատարանը դ/ ընդհանուր իրավասության դատարանը

Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը:
Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը՝ 2 միավոր:
Միայն պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում՝ 0 միավոր:

61.	Քրեական գործը քննող մարմինը հրավիրում է քաղաքացի Ա-ին հարցաքննության՝ իր կողմից որդեգրված Քաղաքացի Բ-ի կատարած իրավախախտման մասին վկայություն տալու՝ նշելով, որ քաղաքացի Ա-ն պարտադիր պետք է ներկայանա և գործով ցուցմունք տա։ Ինչպե՞ս կարող է վարվել Քաղաքացի Ա-ն.	ա/ իրավունք ունի հրաժարվել ցուցմունք տալուց բ/ պարտավոր է վկայել (ցուցմունք տալ) քաղաքացի Բ-ի դեմ գ/ մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալ չի թույլատրվում դ/ ճիշտ են «ա» և «գ» պատասխանները
62.	Երկու քաղաքացիներ կնքել են պայմանագիր։ Պայմանագրով կողմերից մեկը՝պարտատերը, մյուս կողմին՝ պարտապանին վեց ամիս ժամկետով պարտք է տվել՝ 500.000 դրամ։ Վեց ամիսը լրանալուց հետո փոխ պարտք վերցրած պարտապանը հայտնում է, որ չի կարողանում վճարել պարտքը։ Երկար քննարկումից հետո կողմերը համաձայնվում են հին պարտավորությունները փոխարինել նորով, համաձայն որի պարտապանը պարտավորվում է վերանորոգել պարտատիրոջ ավտոմեքենան։ Պարտավորության դադարման ո՞ր դեպքն է առկա.	ա/ նորացում բ/ պարտապանի գույքի պահում գ/ պարտքի ներում դ/ հրաժարագին

63.	Երևան-Սևան մայրուղով մեքենայով ընթանալիս Արմենը նկատեց գունեղ ցուցապաստառ՝ հետևյալ բովանդակությամբ. «Ընտրությանը մասնակցելով՝ դուք կերտում եք ձեր ապագան»: Պետական իշխանության իրականացման ո՞ր եղանակն է այստեղ առկա.	ա/ հարկադրանք բ/ համոզում գ/ իրազեկում դ/ նշվածներից ոչ մեկը
64.	Քաղաքացուհի Ա.Սիմոնյանը դիմել է Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմին (ՔԿԱԳՄ)՝ ներկայացնելով ամուսնալուծության դիմում՝ հիմնավորելով, որ իր ամուսինը՝ Գ. Գևորգյանը, դատապարտվել է ազատազրկման 4 տարի 6 ամիս ժամկետով: Ի՞նչ կարող է անել ՔԿԱԳՄ-ն.	ա/ պահանջել նրա ամուսնու՝ Գ. Գևորգյանի համաձայնությունը բ/ մերժել դիմումը և ուղղորդել պարտադիր դիմելու դատարան գ/ պահանջել Գ. Գևորգյանի՝ դատարանի կողմից անգործունակ ճանաչված լինելու որոշում դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
65.	Ներկայացված տարբերակներից ո՞րն է ճիշտ:	ա/ Միջազգային իրավունքի հիմնական աղբյուրներն են նորմատիվ ակտերը: բ/ Միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտն է մարդը: գ/ Եթե միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են ներպետական օրենքներով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը: դ/ Եթե միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են ներպետական օրենքներով, ապա կիրառվում են ներպետական օրենքներով նախատեսված նորմերը:

66.	Միջազգային մարդասիրական իրավունքի «Ժնևի իրավունք» ճյուղի նպատակն է.	ա/ պաշտպանել զինված ուժերի կողմից այն անձանց, ովքեր դադարել են մասնակցել ռազմական գործողություններին և այն անձանց, որոնք անմիջականորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին։ բ/ սահմանել զինված ընդհարման մեջ գտնվող կողմերի իրավունքը և պարտականությունները ռազմական գործողությունների ընթացքում։ գ/ պահպանել խաղաղությունը և դատապարտել պատերազմը՝ որպես միջազգային հարցերի լուծման միջոց։ դ/ պետության բոլոր քաղաքացիների համար գործունեության բնականոն պայմաններ ապահովելը, նրանց կյանքի ազատության և սեփականության պաշտպանությունը։
67.	Քաղաքական դիրքորոշման տեղեկութային բաղադրատարը ենթադրում է.	ա/ համակրանք և հակակրանք ինչ-ինչ օբյեկտների նկատմամբ բ/ գործելու պատրաստակամություն գ/ մարդու աշխարհայացքը և այն քաղաքական իդեալը, որին նա ձգտում է դ/ իրավախախտ պետության կողմից ինչ-որ նյութական օբյեկտների նախկին վիճակի վերականգնում
68.	«Պետական կառավարման մասին տրակտատում» Ջոն Լոքի ներկայացրած՝ անձի երեք հիմնական բնածին իրավունքներն են.	ա/ Կյանքի, խաղաղության և մարդասիրության իրավունքները բ/ Կյանքի, ազատության և համերաշխության իրավունքները գ/ Կյանքի, ազատության և արդարության իրավունքները դ/ Կյանքի, ազատության և սեփականության իրավունքները

69.	Ներկայացված տարբերակներից ո՞րն է սխալ։ Ոչ իրավական օրենքի դեմ պայքարի երաշխիք է՝	ա/ ժողովրդաիշխանության սկզբունքը բ/ սահմանադրական և ընդհանուր դատական վերահսկողությունը գ/ իրավաստեղծ գործունեության բարդ և ձևականացված բնույթը դ/ հասարակության մեջ ուժային պետական կառույցների քաղաքական և իրավական կարգավիճակը
70.	Նշված տարբերակներից ո՞րն է սխալ.	ա) Իրավական ինստիտուտը տարբերվում է իրավունքի ճյուղից կարգավորման ծավալով։ բ) Իրավունքի յուրաքանչյուր ճյուղին բնորոշ է իր կարգավորման մեթոդը։ գ) Իրավական ինստիտուտը տարբերվում է իրավունքի ճյուղից համապարտադիր նշանակությամբ։ դ) Իրավունքի մի ճյուղը տարբերվում է մյուսից կարգավորման առարկայով։

<u>Չորս բաղադրիչով հարց-առաջադրանքներ</u>

Գտնել ճիշտ կապերն ու համապատասխանությունները աջ և ձախ սյունակներում տրված հասկացությունների, երևույթների միջև: Պատասխանները գրանցել առաջադրանքից հետո զետեղված աղյուսակում՝ համապատասխան թվի տակ նշելով ճիշտ պատասխանի տառը: Ուշադրությու՛ն. պատասխանները պետք է անցկացնել տրամադրված ձևաթղթի վրա:

Պատասխանի ներկայացման այլ տարբերակները չեն գնահատվելու:

Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, առաջադրանքի ամբողջական ճիշտ պատասխանը՝ <u>չորս միավոր</u>:

71. Համապատասխանեցնել քաղաքական գիտակցության գործառույթները և քաղաքական դիրքորոշման բաղադրատարրերը։

1. Վարքագծային բաղադրատարր	ա. Գործելու պատրաստակամություն
2. Ճանաչողական գործառույթ	բ. Մարդու աշխարհայացք և քաղաքական իդեալ
3. Գնահատող գործառույթ	գ. Որոշակի հուզական վերաբերմունք քաղաքական տարբեր կողմերի և երևույթների նկատմամբ
4. Տեղեկութային բաղադրատարր	դ. Որոշակի քաղաքական գիտելիքների ձեռքբերում

1	2	3	4

72. Համապատասխանեցնել օրինակը միջազգային իրավունքի սկզբունքին

1. Բոլոր պետություններն ունեն հավասար հիմնական իրավունքներ ու պարտականություններ, իսկ միջազգային համաժողովներում և կազմակերպություններում ամեն պետություն ունի մեկ ձայն: Պետություններն իրավունք ունեն ազատորեն ընտրելու և զարգացնելու իրենց քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային համակարգերը:	ա) Ինքնիշխան հավասարության սկզբունք
2. Արգելվում է այլ պետությունն իրեն ենթարկելու և նրա իրավունքների իրականացումը սահմանափակելու նպատակով միջոցառումներ կիռարումը:	բ) Պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունք
3. Բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատորեն որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը և իրականացնելու իրենց զարգացումը:	գ) Իրավահավասարություն և ժողովուրդների ինքնորոշման սկզբունք
4. Բոլոր պետությունները պետք է հարգեն իրենց տարածքում բնակվող բոլոր անձանց հիմնական իրավունքներն ու ազատությունները:	դ) Մարդու իրավունքների հարգման զկզբունքը

1	2	3	4

73. Համապատասխանեցնել բովանդակությունը բարոյագիտության կանոններին, ընկալումներին և տեսություններին:

1. «Յուրաքանչյուրը պետք է առաջնորդվի այնպիսի կանոններով , որոնք կարող են բերել առավելագույն բարիք բոլոր շահագրգրված անձանց»:	ա/ Էգոիզմի ընկալում
2. «Վարվիր այնպես, որ քո անձնական շահը ծառայի ուրիշների շահերին»:	բ/ Ի.Կանտի բարոյական պարտքի տեսություն
3. «Բոլորը պետք է հետամուտ լինեն իրենց շահերի իրագործմանը»:	գ/ Չափավոր ալտրուիզմի կանոն
4. «Գործիր միայն այն նորմի համաձայն, որով առաջնորդվելիս միաժամանակ կուզիր, որ այն դառնա համընդհանուր օրենք»:	դ/ Կանոններով առաջնորդվող բարոյական օգտապաշտություն

1	2	3	4

74. Համապատասխանեցնել աշխատությունը ստեղծման տարեթվին.

1. Ս.Սպարապետի Դատաստանագիրք	ա) 1746 թ.
2. Աստրախանի հայերի դատաստանագիրք	բ) 1265 թ
3. Լեհահայոց դատաստանագիրք	գ) 1184 թ.
4. Մ.Գոշի Դատաստանագիրք	դ) 1519 թ.

1	2	3	4

75. Համապատասխանեցնել ենթաօրենսդրական ակտերը.

1. Ընդհանուր	ա/ նախարարության հրահանգ
2. Ներկազմակերպական	բ/ կառավարության որոշում
3. Գերատեսչական	գ/ ՏԻՄ–ի նորմատիվ իրավական ակտ
4. Տեղական	դ/ դպրոցի տնօրենի հրաման

1	2	3	4